# 235 Կհանձնվիմ Քեզ, Հիսո՛ւս իմ,

1. Կհանձնվիմ Քեզ, Հիսո՛ւս իմ,
Կուտամ հոժար կյանքս բոլոր,
Կսիրեմ Քեզ, կվստահիմ,
Դու ես իմ կյանքս ամեն օր:

Քեզ կհանձնվիմ,
Քեզ կհանձնվիմ,
Անպայման, օրհնյա՛լ Փրկի՛չ իմ,
Քեզ կհանձնվիմ:

2. Կհանձնվիմ Քեզ, Փրկի՛չ իմ,
Ոտիցդ առջև եմ ահա,
Հաճույքն աշխարհի ձգած եմ,
Ա՛ռ զիս, Հիսո՛ւս, ա՛ռ հիմա:

3. Կհանձնվիմ Քեզ, Հիսո՛ւս իմ,
Հետ այսու ես Քուկդ եմ լոկ,
Սուրբ ներկայությամբդ թող լեցվիմ,
Իմս ըլլալդ գիտնամ իրոք:

4. Կհանձնվիմ Քեզ, Հիսո՛ւս իմ,
Ինչ որ ունիմ, առ Քեզի,
Շնորհք և ուժ Քեզմե կընդունիմ,
Օրհնությունդ ալ՝ վրաս հանգչի:

5. Կհանձնվիմ Քեզ, Հիսո՛ւս իմ,
Կզգամ արդ հուրն սրբազան,
Լման փրկությամբդ կը հրճվիմ,
Փա՛ռք, ո՛հ, փա՛ռք Քո սուրբ Անվան: